



Հայոց լեզու

8-րդ դասարան ընդունվողների համար, 2016-2017 ուստարի

1. Լրացրո՛ւ բաց թողնված տառերը (6 մվ., -0,5):

Ասում են՝ հայոց բարդիները ծնունդ են առել դ...խեմ ու բռնակալ Բելի դեմ կռվելու ժամանակ գոհված կտրի... հայրդիների արյունից: Դրա համար էլ նրանք նման են գորաշար կազմած կամ մ...այնակ մնացած զինվորների: Բարդիների անտառ չի լինում, որովհետև Հայկի զինվորները փոքրաթիվ են եղել: Հայաստանի տարբեր անկյուններում նրանց տեսնելիս կնկատես, որ հա...թողի պես բար...ր են պահում իրենց սիգապան... գլուխները: Խրո...տ են անչափ, եր...եք ուրիշների առաջ գլուխ չեն խոնար...ում: Պեր...ահասակ են, ճերմակաբուն, ճոխ սաղար...ով, նրբագեղ: Գարնան զար...ոնքին բարդու սերմերը տերևներից պոկվում և քամու բերանն ընկած ձյան փաթիլների պես օդում թ...թ...ալով՝ հայկական բե...ի հողի մեջ են ընկնում, ծլար...ակում ու բարձրուղեշ բարդի դառնում:

2. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հետևյալ բառերի հոմանիշները (3 մվ., -0.5):

Դաժան-----
հպարտ -----
հուռթի -----
շքեղ -----
անվեհեր -----
սլացիկ-----

3. Հետևյալ բառակապակցությունների իմաստն արտահայտի՛ր մեկ բառով՝ կիրառելով տրված բաղադրիչները (3 մվ., -0,5):

- Ոտքերի հետք -----
- Ժանյակներով զարդարված -----
- շուրջը սփռված -----
- մեղք գործող -----
- կյանք տվող -----
- մտքերից ծնված -----

4. -անակ վերջածանցով և տրված բառերից ընտրված համապատասխան արմատներով կազմի՛ր վեց ածանցավոր բառ (3 մվ., -0.5):

Հուշում: Կազմածդ բառերը պիտի ունենան միայն մեկ արմատ և մեկ վերջածանց՝ անակ:

Կորնթարդ, տարօրինակ, անհաղթ, պարիսպ, հեռուստացույց, ճոճել, սառնորակ, լռություն, սարսուռ, ժամ, անգուսպ, մերձակա, մոտակա, մրցապայքար:

5. Ուղղի՛ր լեզվական սխալները. ընդգծի՛ր սխալ բառը, տողի վրա գրի՛ր միայն քո առաջարկած բառը (2 մվ., -0,4):

ա. Խնդրում ենք ելույթների ժամանակ դահլիճում լռություն պաշտպանել:

բ. Աղմուկ լսելուց սովորաբար ակնոցը բարձրացնում էր ճակատին և նայում դռան կողմը:

գ. Նա հիացած նայում էր Մարտիրոս Սարյանի նկարների վրա:

դ. Ես չհասցրեցի ավարտել գրքի ընթերցումը, երբ նա աղմուկով ներս մտավ:

ե. Նա բազմիցս անգամ զգուշացրել էր թափվող քարերի մասին:

6. Գրել շարադրանք «Ես ուրախ եմ, որ» վերնագրով (3 մվ., ուղղ. -0,5; կետ. -0,2):

